



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիափույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուծման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և բնդիանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ



Հարգելի շենգավիթցիներ,

Բոլորիս համատեղ աշխատանքի, միմյանց նկատմամբ վստահության ու փոխըմբռնման և Շենգավիթի հանդեպ ունեցած առանձնահատուկ կապվածության շնորհիվ 2017 թվականին մեր վարչական շրջանում ունեցանք նոր ձեռքբերումներ ու հաջողություններ: Կատարվեց բավականին տպավորիչ աշխատանք: Վստահորեն կարող եմ ասել, որ այսօր Շենգավիթը շատ ավելի բարեկարգ ու գեղեցիկ է, իսկ դեռևս առկա խնդիրներն անհամեմատ քիչ են, քան տարիներ առաջ: Փոխօգնության և վստահության առկա մթնոլորտում նույնիսկ ամենախիզախ ու անիրական թվացող ծրագրերն իրականանալի են. ահա այս գիտակցումով է, որ շարունակելու ենք աշխատել նաև 2018 թվականին՝ պատրաստակամ լուծելու մեր առջև ծառացած խնդիրները և իրագործելու նոր ծրագրեր՝ հոգուտ Շենգավիթի և շենգավիթցիների:

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար
Արմեն Սարգսյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են շինարարական և բարեկարգման լայնածավալ աշխատանքներ:

2017 թվականին Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են շուրջ **100000** քմ ասֆալտապատման աշխատանքներ.

✓ Փողոցներ` **58000** քմ,

✓ Բակեր` **41000** քմ,

✓ Մայթեր` **3000** քմ,

Վերանորոգվել է **2000** գծմ եզրաքար:

Այգիներում և պուրակներում իրականացվել են սալիկապատման աշխատանքներ շուրջ **1100** քմ:

Կառուցվել է **48** թեքհարթակ:



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են զգալի աշխատանքներ բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ:



Շքամուտքերի վերանորոգում.

- ✓ Վերանորոգվել է **84** բազմաբնակարան շենքերի **161** մուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում,
- ✓ Տեղադրվել է **162** մուտքի դուռ:

Տանիքների վերանորոգում.

- ✓ Վերանորոգվել է **63** շենքի **5538** քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիք,
- ✓ Վերանորոգվել է **200** շենքի **10565** քմ ընդհանուր մակերեսով թեք տանիք,
- ✓ Հիմնանորոգվել են Ս. Տարոնցու փողոցի հ. 7, Գ. Նժդեհի փողոցի հ. 28/2, Արտաշիսյան փողոցի հ. 71, 53/15, 51/16, 51/17, 51/18, Չեխովի փողոցի հ. 34, Բագրատունյաց փողոցի հ. 43 շենքերի թեք տանիքները,
- ✓ Փոխվել և նորոգվել է **5210** գծմ անձրևատար խողովակ **191** շենքերում:
- ✓ Մասնակի վերանորոգվել և սպասարկվել է **225** վերելակ:

Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում

- ✓ Իրականացվել է բազմաբնակարան շենքերի վթարային վիճակում գտնվող **32** պատշգամբների նորոգում և ամրացում:

Համագործակցություն համատիրությունների հետ

- ✓ Փոխվել և վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի ջրագծերի և կոյուղագծերի շուրջ **2800** գծմ ներքին ցանց,
- ✓ Տեղադրվել են նստարաններ և զրուցատաղավարներ, մանկական խաղեր, սպորտային խաղեր, աղբամաններ,
- ✓ **27** բակերում կատարվել է նկարազարդում:

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում բակային տարածքների բարեկարգման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել:

Բակային տարածքների բարեկարգում

- ✓ չիմնանորոգվել և կահավորվել են Բագրատունյաց 35 շենքի, Գ. Նժդեհի 45 շենքի, Գ. Նժդեհի 2 և 4 շենքերի և Բագրատունյաց 19, 21 շենքերի միացյալ, Արտաշիսյան 73 շենքի, Ս. Տարոնցու 24, 26 շենքերի միացյալ, Վ. Շենգավիթ 2-րդ փողոց 1-ին շենքի, Կողբի 1-ին փողոցին հարող բակային տարածքները:

Խաղահրապարակների ստեղծում

- ✓ Ստեղծվել է 12 խաղահրապարակ,
- ✓ Գործող խաղահրապարակները համալրվել են 48 նոր խաղերով:
- ✓ Կարմիր բլուր հնավայրի հարակից այգու տարածքում շահագործման է հանձնվել մինի ֆուտբոլի խաղադաշտ:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում առաջնահերթ տեղ են զբաղեցրել սոցիալական աջակցության ծրագրերը:

Այցելություն զորամասեր

- ✓ Կազմակերպվել է ՀՀ և ԱՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների **448** ծնողների այցելություն զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների և կազմակերպությունների հետ.

- ✓ Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Շենգավիթ» համատիրությունների միություն» ՀԿ, «Պարզևիր ժպիտ» ՀԿ, «Դիակոնիա» ԲՀ, «Կամրջակ» ԲՀԿ, «Ամբոր» ՀԿ, «Առդա» ԲՀԿ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ, «Փրկություն» ՀԿ, «Էմմանուել» հատուկ կարիքներով երեխաների ՀԿ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, «ՀՀ խուլերի միավորում» ՀԿ, «Հույսի կաթիլ» ԳՀ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Նյու Լայֆ» և «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամների, «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ, «Սատար» հաշմանդամների ՀԿ, «Ալեքս» ՀԿ, «Ազատամարտի վետերանների միություն» ՀԿ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի, «Փեն Բոքս» և «Էդկա» ՍՊ ընկերությունների և այլ բարերարների հետ:
- ✓ Արցախյան պատերազմի մասնակից և զոհված ազատամարտիկների ընտանիքների, սոցիալապես անապահով և սիրիահայ ընտանիքներից **95** երեխա 20-օրյա հանգստի է մեկնել Ծաղկաձորի «ԼԱՎԱ-Աղբյուր» և **55** երեխա՝ Հանքավանի «Հեքիաթների կիրճ» ճամբարներ:
- ✓ Սիրիահայ **68** ընտանիքի տրամադրվել են սննդի օգնության փաթեթներ, անկողնային պարագաներ, սիրիահայ **13** ընտանիքի՝ դրամական և այլ աջակցություններ:




Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին.


- ✓ **964** ընտանիքի ցուցաբերվել է դրամական օգնություն,
- ✓ **2225** ընտանիքի տրամադրվել են սննդի փաթեթներ, **132**-ին՝ հագուստ և կոշիկ, **12** բնակչի տրամադրվել է հաշմանդամի անվասայլակ, քայլակ, հենակ, **70** ընտանիք ստացել է վառելափայտ,
- ✓ Շուրջ **140** շահառուներ օգտվել են բարեգործական ճաշարանից,
- ✓ **22** մանկապարտեզների ավագ խմբերի **1204** երեխաներ որպես նվեր ստացել են գրենական պիտույքներով համալրված դպրոցական պայուսակներ,
- ✓ Ամանորյա տոներին ընդառաջ՝ սոցիալապես անապահով շուրջ **2860** ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ, իսկ **5000** երեխաների՝ քաղցրավենիքի փաթեթներ,
- ✓ Աջակցության նպատակով պարբերաբար այցելություններ են կազմակերպվել ՀՀ Սյունիքի մարզի 5 և ԱՀ Մարտակերտի շրջանի 5 գյուղեր, ԱՀ Մարտակերտ և Մարտունի քաղաքներ:

«Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում **287** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող զավակներին այցելած ծնողների թիվ



Դրամական աջակցություն ստացած ընտանիքների քանակ



ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. զգալի աշխատանքներ են կատարվել կրթական ծրագրերի ոլորտում:

- ✓ Նախադպրոցական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում.
- ✓ Ավարտվել են հ. 139 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:
Հիմնանորոգվել է հ. 138 մանկապարտեզի տանիքը:
- ✓ Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռքբերում.
- ✓ Նոր գույքի համալրման ծրագրով տրամադրվել է **962** մանկական աթոռ, **132** մանկական զգեստապահարան, **248** երկհարկանի մահճակալ, 272 եռահարկ մահճակալ՝ ներքնակներով և **151** մանկական սեղան:
- ✓ Անվճար հիմունքով 21 մանկապարտեզներում կազմակերպվել է **3695** երեխայի անվճար նախադպրոցական ուսուցումը:



2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են տարաբնույթ մշակութային ծրագրեր:

Աշխատանքներ մշակութային կենտրոններում.

- ✓ Հիմնանորոգվել է Պատանեկության ստեղծագործական կենտրոնը:

Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների թիվ.

- ✓ Ստ. Զրբաշյանի անվան երաժշտական դպրոց՝ **412** երեխա,
- ✓ Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց՝ **1008** երեխա,
- ✓ Պատանեկության ստեղծագործական կենտրոն՝ **648** երեխա,
- ✓ Մանկապատանեկան արվեստի կենտրոն՝ **280** երեխա,
- ✓ Թիվ 5 մշակույթի կենտրոն՝ **332** երեխա:

Մշակութային միջոցառումների կազմակերպում

- ✓ Պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված պետական, ազգային, տաղավար տոներին, ինչպես նաև տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ, ներկայացումներ:



2017 թ. Շենգավիթ վարչական շրջանում իրականացվել են բազմաթիվ սպորտային ծրագրեր:

Սպորտդպրոց հաճախող երեխաների թիվը՝ 1225

- ✓ «Երևանի մենապայքարային ու խաղային մարզաձևերի մանկապատանեկան համալիր մարզադպրոց»՝ **426** երեխա,
- ✓ «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց»՝ **230** երեխա,
- ✓ «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց»՝ **169** երեխա,
- ✓ «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզական ակումբ»՝ **48** երեխա,
- ✓ «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց»՝ **352** երեխա:

«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ավանդական փառատոնի բասկետբոլի «Ոսկե զամբյուղ» մրցաշարում Շենգավիթ վարչական շրջանի թիմը զբաղեցրել է 1-ին հորիզոնականը:

Սպորտային միջոցառումների կազմակերպում

- ✓ Քաղաքացիներին դեպի սպորտ ուղղորդելու, առողջ ապրելակերպ քարոզելու, սպորտային կյանքն աշխուժացնելու և բազմաֆունկցիոնալ դաշտերն արդյունավետ օգտագործելու նպատակով կազմակերպվել են մի շարք մարզաառողջարարական միջոցառումներ,
- ✓ Վարչական շրջանի թիմերը (սեղանի թենիսի, բասկետբոլի, շախմատի, լողի, սանդա-ուշուի) մշտապես ակտիվ մասնակցություն են ցուցաբերում Երևան քաղաքում կազմակերպվող բոլոր մարզական միջոցառումներին:



2017 թ. քաղաքային կանաչապատման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Շենգավիթ վարչական շրջանում:



Ոռոգման նոր ցանցի անցկացում, եղած ցանցի վերանորոգում.

- ✓ Անցկացվել է ոռոգման նոր ցանց՝ **982** գծմ,
- ✓ Վերանորոգվել և ներկվել է շուրջ **200** գծմ խողովակ,
- ✓ Փոխվել է **85** փական:

Նոր կանաչ տարածքների ստեղծում.

- ✓ Բարելավվել է **1030** քմ կանաչ տարածք,
- ✓ Իրականացվել են **1464** ծառի խնամքի և պահպանման աշխատանքներ
- ✓ Գարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել է **3500** ծառ,
- ✓ Տնկվել է **159** մշտադալար թուփ,
- ✓ Տնկվել է **233582** ծաղիկ:



ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՌԼԻԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. աշխատանքներ են իրականացվել էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի, կոյուղագծերի, ջրատար համակարգի վերանորոգման ուղղությամբ:

Զրամատակարարման համակարգի վերանորոգում «Վերլիա Զուր» ՓԲԸ ծրագրով՝

- ✓ Կառուցվել են նոր ջրագծեր Պատկանյան, Կոտովսկի, Ղարիբ-ջանյան, Մադոյան, Դոդոխյան, Մուսայելյան, Հրազդան, Օդեսա փողոցներում և Սևանի փողոցի 2-րդ նրբանցքում,
- ✓ Փոխարինվել է **7000** մետր երկարությամբ մայրուղու ջրատար խողովակ և կառուցվել են **5000** գծմ տնային գծեր,
- ✓ Կառուցվել է **634** ջրաչափական հոր, **650** բաժանորդների ջրաչափական հանգույց,
- ✓ Փոխարինվել են **10** դիտահորի ծածկեր և տեղադրվել է **23** դիտահորի կափարիչ:

Գազամատակարարում

- ✓ Նորագավիթ թաղամասում կառուցվել է **935** գծմ նոր գազատար խողովակաշար,
- ✓ Ներկվել է **2000** գծմ ընդհանուր երկարությամբ գազատար խողովակաշար:

Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում

- ✓ Փոխարինվել է **13500** գծմ էլեկտրական հաղորդալար,
- ✓ Կառուցվել է նոր 6 կՎտ հզորությամբ **1550** գծմ երկարությամբ մալուխագիծ,



- ✓ Կարգաբերվել են **28** մուտքերի էլեկտրական տնտեսության մալուխները,
- ✓ Փոխարինվել է **170** բաժանորդային արկղ,
- ✓ Ուղղվել է **27** և տեղադրվել **37** էլեկտրական նոր հենասյուն:

Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

- ✓ **14** փողոցների **91** հասցեներում կատարվել է արտաքին լուսավորության ցանցի անցկացում,
- ✓ Տեղադրվել է **132** հենասյուն, անցկացվել է **21780** գծմ արտաքին լուսավորման ցանց՝ 468 լուսակետով,
- ✓ Նոր գեղարվեստական լուսավորության ցանց է կառուցվել Արշակունյաց պողոտայի և Գ. Նժդեհի փողոցի խաչմերուկում և Բագրատունյաց փողոցում,
- ✓ Արշակունյաց պողոտայի 250 լուսակետ փոխարինվել է LED լուսավորությամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ



- ✓ Սեպտեմբեր ամսին վարչական շրջանի պատվիրակությունն այցելել է ՌԴ Ստավրոպոլ քաղաք՝ մասնակցելու քաղաքի տոնին:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

- ✓ Տարվա ընթացքում վարչական շրջանի պատմիրականություններն այցելել են մի շարք քաղաքներ՝ Իսպանիայի Վալենսիա, Չինաստանի Ուոումչի, Ֆրանսիայի Հանրապետության Իլ-Դե-Ֆրանս երկրամաս, ԱՄՆ-ի Գլենդել և Լոս Անջելես, Վրաստանի Հանրապետության Բաթումի, Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլ, Գելենջիկ քաղաքներ, մասնակցել տարբեր միջոցառումների և բազմակողմ համագործակցության նպատակով ձեռք բերել պայմանավորվածություններ:
- ✓ Շենգավիթ վարչական շրջանի և ԱՀ Մարտակերտի վարչակազմի, ինչպես նաև Մարտունի քաղաքի միջև բազմակողմ համագործակցության նպատակով վավերացված հուշագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են այցելություններ՝ կառավարման, սոցիալական, կրթական, մշակութային ոլորտներում փորձի փոխանակման և աջակցման նպատակով:

Շենգավիթ վարչական շրջանի և ՀՀ Սյունիքի մարզի համայնքների միջև վավերացված հուշագրերի շրջանակներում պարբերաբար իրականացվում են փոխայցելություններ:





**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

ԹԵՃ ԳԻԾ՝
+(374 11) 518-808
shengavit@yerevan.am

